# Սմարթֆոնով բարձրորակ լուսանկարներ անելու ուղեցույց



Glovo

Գիտե՞ք, որ **նկարներով ապրանքները 3 անգամ ավելի հաճախ են գնվում**, քան առանց պատկերների:







Իսկ դուք տեղյա՞կ էիք այն փաստի մասին, որ **առցանց գնորդների 75%-ը որոշում կայացնելու համար ապավինում է ապրանքի**

Հետևեք այս ուղեցույցին և կսովորեք, թե ինչպես հեշտությամբ լուսանկարել ձեր ճաշացանկի լավագույն նկարները ձեր հեռախոսից:

Glovo

# ՀԵՏԵՎԵՔ ԱՅՍ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ

ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵՔ MENU MANAGER





ԱՎԵԼԱՑՐԵՔ ԿԱՄ ԸՆՏՐԵՔ ԱՊՐԱՆՔ

ՊԱՏՐԱՍՏԵՔ ՁԵՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՄԱՆ ՍԱՐՔԸ






ՍԿՍԵՆՔ ԼՈՒՍԱՆԿԱՐԵԼ

ՎԵՐԲԵՌՆԵՔ ՁԵՐ ՆԿԱՐՆԵՐԸ



# Content

1. Log into Menu Manager
2. Add or select the dish to add the missing pictures
3. Upload your photos to your menu using Menu Manager
4. Learn how to take quality photos
5. Take into account the Do's and Don'ts

# Menu Manager

ԻՆՉՊԵՍ ԽՄԲԱԳՐԵԼ ՁԵՐ ՄԵՆՅՈՒՆ

# 01 ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵՔ MENU MANAGER

**Մուտք գործեք**
https://managers.glovoapp.com/hello և լրացրեք դաշտերը օգտագործելով Ձեր Glovo գործընկերոջ մուտքային տվյալները և ադմինիստրատոր գաղտնաբառը:

Սկանավորեք այստեղ և մուտք գործեք Menu Manager:



# 02 ԱՎԵԼԱՑՐԵՔ ԿԱՄ ԸՆՏՐԵՔ ՁԵՐ ՄԵՆՅՈՒԻ ԱՊՐԱՆՔԸ

Եթե ցանկանում եք ձեր մենյուում **նոր ապրանք ավելացնել**

Էջի վերևում կտեսնեք **«+» կոճակը**, որը կարող եք սեղմել՝ ապրանք ավելացնելու համար: Այնտեղ կարող եք վերբեռնել ձեր լուսանկարները և ստեղծել նոր ճաշատեսակ:




Եթե ցանկանում եք **խմբագրել առկա ապրանքը**

Անցեք ձեր ռեստորանի ճաշացանկը: **Ավելացրեք կամ փոխարինեք ապրանքի նկարը՝ սեղմելով ապրանքի** վրա և փոխարինելով դրա նկարը նորով:




Glovo

# 03

# ԱՐԵՔ ՍԵՓԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ ԵՎ ՎԵՐԲԵՌՆԵՔ ԴՐԱՆՔ ՁԵՐ ՃԱՇԱՑԱՆԿՈՒՄ

Glovo

1

**Մուտք գործեք** Menu Manager **Glovo գործընկերոջ մուտքային տվյալներով** և ադմինիստրատորի գաղտնաբառով




2

Menu Manager-ում **ոլորեք ձեր ճաշացանկում**



3

**Ընտրեք այն ապրանքը,** որին ցանկանում եք նկարներ ավելացնել




4

Կբացվի վահանակ, որտեղ **դուք կկարողանաք խմբագրել ձեր ապրանքը**




5

Վերբեռնեք պատկեր ձեր լուսանկարների հոսքից կամ լուսանկարեք ձեր ճաշատեսակը այս պահին՝ **սեղմելով «Վերբեռնել պատկերը»** Menu Manager-ում:




**Զգիտե՞ք ինչպես որակյալ լուսանկարներ անել:**

Հետևեք մեր [խորհուրդներին]

6

Նկարները վերբեռնելուց հետո **սեղմեք «Պահել փոփոխությունները»**




7

**Դիտեք նոր վերբեռնված նկարները** ձեր ռեստորանի ճաշացանկում մի քանի վայրկյանում:









# Լուսանկարչությ ան խորհուրդներ

Glovo

# 01

# Պատրաստեք ձեր հավաքածուն

Glovo-ի առաջարկը

# ՎԵՐՑՐԵՔ ՁԵՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՆՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

Մենք առաջարկում ենք մի քանի օգտակար գործիքներ, որոնք կարևոր են: Դրանք պարտադիր չեն, բայց շատ խորհուրդ են տրվում, եթե ցանկանում եք ստանալ լավագույն լուսանկարները:



Եռոտանի




Տեսախցիկ / Բջջային հեռախոս



Լուսանկարչական տուփ կամ նմանատիպ

# ՍՏԵՂԾԵՔ ՁԵՐ ՍԵՓԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՄԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

## Գտեք հարթ մակերես և համապատասխան ֆոն



Օգտագործեք սեղան կամ ցանկացած հարթ մակերես, որտեղ ձեր ապրանքը պատշաճ կերպով տեղավորվում է, և այն հնարավորինս մոտ դրեք պատուհանին՝ լավ բնական լուսավորում ստանալու համար:



Ավելի որակյալ պատկերներ ունենալու համար օգտագործեք սպիտակ ֆոն կամ ֆոն պարզ գույներով և մակատեսքով:
Այդպիսով դուք կվերացնեք այն գործոնները, որոնք շեղում են ձեր ապրանքից և մաքուր տեսք կհաղորդեք ճաշատեսակին

Ձեր ապրանքի մասին ավելի մանրամասն պատկերացում կազմելու համար այն տեղադրեք **սպիտակ թղթի կամ սպիտակ կրաֆտ թղթի** վրա՝ բնական լուսավորումն արտացոլելու համար:

Ամբողջականության, հետևողականության զգացում ստեղծելու և օգտատերերի փորձը բարելավելու համար մենք առաջարկում ենք միշտ օգտագործել նույն ֆոնը ողջ ճաշացանկում:

# ՍՏԵՂԾԵՔ ՁԵՐ ՍԵՓԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՄԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

Օգտագործեք բնական լուսավորում



Բնական լուսավորումը հիանալի է բարձրորակ նկարներ ստեղծելու համար: **Գտեք պատուհան և դրեք դրա կողքին հարթ մակերեսը**

Եթե բնական լուսավորում չունեք կամ գիշերն եք լուսանկարում, դրա փոխարեն օգտագործեք արհեստական լուսավորում:

**Երբեք մի օգտագործեք լուսարձակում** և միշտ աշխատեք խուսափել մուգ ստվերներից կամ արտացոլումներից:

Glovo

# 02 Տեղադրեք ձեր ապրանքը

# ՏԵՂԱԴՐԵՔ ՁԵՐ ԱՊՐԱՆՔԸ



**Ցույց տվեք ճաշատեսակի համեղությունը:** Տեղադրեք ուտեստը այնպես, որ այն համեղ և գայթակղիչ տեսք ունենա



**Ցույց տվեք ձեր ճաշատեսակը ներսից**
Համոզվեք, որ ճաշատեսակի բաղադրիչները հստակ տեսանելի են հաճախորդին: Բուրիտոները և սենդվիչները երկու մասի բաժանելը կօգնի օգտատերերին տեսնել բոլոր բաղադրիչները



**Ճաշատեսակը դրեք կենտրոնում**
Համոզվեք, որ ճաշատեսակը դրված է մակերեսի վրա կենտրոնում



**Հանեք ուտեստը փաթեթից**
Փաթեթավորումը սովորաբար վատ տեսք է տալիս լուսանկարին: Հանեք ուտեստը այնտեղից և դրեք այն ափսեի մեջ:



**Մի՛ հետաձգեք լուսանկարումը:**
Սնունդը պատրաստելուց հետո մի քանի րոպե սպասելը կարող է ճաշատեսակին մեռկ և սառը տեսք տալ: Սկսեք լուսանկարել ձեր ապրանքը հենց որ այն դրել եք ափսեին:



**Լուսանկարում մի՛ ներառեք այն տարրերը կամ բաղադրիչները, որոնք ձեր մատուցած ճաշատեսակի մաս չեն կազմում:**
Տեղադրեք միայն այն ապրանքը, որը կներառեք ձեր ճաշացանկում

Glovo

# 03 Լուսանկարե
# ՛ք:

# ԼՈՒՍԱՆԿԱՐԵՔ ԱՊՐԱՆՔԸ

Ժամանակն է լուսանկարել ձեր ապրանքները: Դա անելու համար հաշվի առեք հետևյալը.









**Ընտրեք լավագույն ռակուրսը ձեր ապրանքի համար**

Լուսանկարեք ձեր ուտեստը ճակատային հարթության վրա կամ 45 աստիճանի անկյան տակ

**Միշտ ցույց տվեք ափսեն ամբողջությամբ**

Համոզվեք, որ լուսանկարը կտրված չէ, և որ ամբողջ ապրանքը տեսանելի է:

# ԼՈՒՍԱՆԿԱՐԵՔ ԱՊՐԱՆՔԸ

Ժամանակն է լուսանկարել ձեր ապրանքները: Դա անելու համար հաշվի առեք հետևյալը.









**Համոզվեք, որ բոլոր բաղադրիչները և դրա մասերը հստակ երևում են**
Պատկերը պետք է իրատեսական լինի, և բոլոր բաղադրիչները պետք է հստակ երևան

**Եթե դա համակցված ճաշատեսակ է կամ ճաշացանկ, ցուցադրեք տարրերը միմյանցից առանձին:**
Բացառությամբ համակցված ճաշատեսակի նկարների, մի նկարեք բազմաթիվ ուտեստներ միանգամից:

# ԿԱՐՄԻՐ ՔԱՐՏԵՐ

Նկարներում մի ներառեք **ջրանիշեր** կամ խմբագրման ծրագրերի վերնագրեր:

Մի՛ լուսանկարեք **վատ ձևավորված ուտեստներ** և **մի՛ օգտագործեք լուսարձակում**











Պետք է նաև խուսափել **լոգոներից**

Պատկերը չպետք է լինի **լղոզված, պիքսելացված, աղավաղված** կամ **ձգված**

# ԵՎ ՄԻՇՏ ՀԻՇԵՔ...

**Լուսանկարներով ապրանքները 3 անգամ ավելի հաճախ են գնում:**

**Ձեր ճաշացանկում շատ ապրանքներ ունեք և չգիտե՞ք՝ որտեղից սկսել**

**Սկսեք Ձեր ամենաշատ վաճառվող ապրանքները բարելավելուց!**
Այն Գործընկերները, ովքեր ավելացրել են իրենց 5 լավագույն վաճառվող ապրանքների լուսանկարները, գրանցել են 18% վաճառքի աճ!

Մի՛ մոռացեք բարելավել Ձեր ճաշացանկը՝ ավելացնելով լուսանկարներ և նկարագրություններ մեր նոր Menu Manager գործիքի միջոցով

Սկանավորեք այստեղ և մուտք գործեք Menu Manager: